ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1
10.10.2017թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-ԲԸԾՁԲ-2017/3ՏՀ-2
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «30» հունվարի 2018թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության գործադիր տնօրեն Ռ. Սողոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, և հիմք ընդունելով Կողմերի միջև 10.10.2017թ. կնքված N ՏԿՆ-ԲԸԾՁԲ-2017/3ՏՀ-2 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը համաձայնվեցին.

1.2 Հաստատել Համաձայնագրի վճարման ժամանակացույցը համաձայն հավելվածի (կցվում է):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն<br>ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3<br>Կենտրոնական Գանձապետարան<br>Հ/Հ 900011002632<br>ՀՎՀՀ 02565618 | «Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ<br>ԼՂՀ ք, Ստեփանակերտ, Հեքիմյան 8 ա, բն. 23<br>«Արցախբանկ» ՓԲԸ, Երևանի կենտրոնական մ/ճ<br>Հ/Հ 22307601152500,<br>ՀՎՀՀ 90009361 |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | |

Հաստատված է
N ՏԿՆ-ԲԸԵՁԲ-2017/3ՏՀ-2 գնման պայմանագրի

«-----» հունվարի 2018թ. կնքված
թիվ 1 Համաձայնագրով

ՀԱՎԵԼՎԱԾ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(ՀՀ դրամ)

| N | Գնման ենթակա աշխատանքների անվանումը | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2018թ. պետական բյուջեի հաշվին նախատեսված միջոցներից, ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Տարի |
| 2 | Ա/ճ Մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ86+700 հատվածում կամուրջի վերանորոգման տեխնիկական հսկողություն | | 41,000,0 | 41,000,0 | 41,000,0 | 41,000,0 | 41,000,0 | 41,000,0 | 41,000,0 | 41,000,0 | 41,000,0 | 41,000,0 | 41,000,0 | 41,000,0 |

*Վճարման ենթակա գումարները *ներկայացված են աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և
տեղեկատվական տեխնոլոգիաների
նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011002632
ՀՎՀՀ 02565518

---
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Արցախճան ինստիտուտ» ՓԲԸ

ԼՂՀ ք, Ստեփանակերտ, Հեքիմյան8 ա,
բն. 23
«Արցախբանկ» ՓԲԸ, Երևանի
կենտրոնական մ/ճ
Հ/Հ 22307601152500,
ՀՎՀՀ 90009361

---
(ստորագրություն)

Կ.Տ.

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՏԿՆ-ԲՄԾՁԲ-2017/3ՏՀ-2

ք. Երևան «10» 10 2017թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արցախճան ինստիտուտ» ՓԲԸ -ն, ի դեմս ընկերության գործադիր տնօրեն Ռ. Սողոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները ներկայացված են պայմանագրի N 4 Հավելվածում:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 48000 (քառասունութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ընդ որում 2017թ. իրականացվելիք աշխատանքների գինը կազմում է 7000 (յոթ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության

օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում,

Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն<br>ք. Երևան, Նալբանդյան 28<br>Կենտրոնական Գանձապետարան<br>Հ/Հ 900011002632<br>ՀՎՀՀ 02565518 | <<Արցախճան>> ինստիտուտ ՓԲԸ<br>ԼՂՀ, ք.Ստեփանակերտ, Հեքիմյան 8ա, բն.23,<br>Արցախբանկ ՓԲԸ, Երևանի կենտրոնական մ/ճ<br>Հ/Հ 223076011525,<br>ՀՎՀՀ 90009361 |
| _____<br>(ստորագրություն) | _____ |
| Կ.Տ. | |

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մատուցման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | Ժամկետը** |
| 3 | 71351540/1 | Տեխնիկական հսկողության ծառայություններ | դրամ | | 1 | | համապատասխան շինարարական աշխատանքների կատարման ավարտը: |

*Ա/ճ Մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ86+700 հատվածում կամուրջի վերանորոգման տեխնիկական հսկողության ծառայություն*

| | |
|---|---|
| *Ծրագրի անվանումը* | ՀՀ 2017թ. պետական բյուջեի պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում |
| *Ֆինանսավորման աղբյուր* | 2017թ. ՀՀ պետական բյուջե |
| *Պատվիրատու* | ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն |
| *Ծառայության անվանումը* | Ա/ճ Մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ86+700 հատվածում կամուրջի վերանորոգման տեխնիկական հսկողության ծառայություն |
| *Ճանապարհի անվանումը* | Ա/ճ Մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման |
| *Հատված* | կմ86+700 |
| *Աշխատանքի տեսակը* | Ըստ նախագծի |
| *Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ* | • Իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն՝ համաձայն քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանում բերված դրույթների՝ ապահովելով Ծառայությունը մատուցողի կողմից նշանակված տեխնիկական հսկիչի ամենօրյա ներկայությունը շինարարական օբյեկտում (ընդ որում տեխնիկական հսկիչը պետք է ընդգրկված լինի Ծառայությունը մատուցողին տրված լիցենզիայի պատասխանատու անձանց ներդիրում: Տվյալ շինարարական տեղամասում նշանակված տեխնիկական հսկիչի անհարգելի բացակայության դեպքում Ծառայություն մատուցողը պայմանագրով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:<br>• Հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ աշխատանքային նախագծին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող շինարարական նորմերին |

- Հաստատել և հսկել աշխատանքների իրականացման ծրագիրը
- Ստուգել և հսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պահանջներին
- Գնահատել և հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի
- Ստուգել բոլոր այն լաբորատոր փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար
- Ստուգել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար
- Կատարել որակի և կատարված ծավալի ամենօրյա հսկում: Հաստատել վճարման հավաստագրերը, եթե աշխատանքները կատարվել են անհրաժեշտ որակով և ծավալով
- Կապալառուին պարզաբանել նախագծային փաստաթղթերի հետ կապված հարցերը: Անհրաժեշտության դեպքում առաջարկել աշխատանքային ժամանակացույցի մեջ կատարել փոփոխություններ կամ առաջարկել կատարել լրացուցիչ վճարումներ (երկու դեպքում էլ անհրաժեշտ է Պատվիրատուի համաձայնությունը)
- Իրականացնել հսկողություն աշխատանքային տեղամասերում շինարարական աշխատանքների անվտանգությունը ապահովելու նպատակով: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, անվտանգության այլ միջոցների առկայությունը
- Կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի տեխնիկական հսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների օրական հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր)
- Ստուգել և հաստատել կապալառուի կողմից նախապատրաստված կատարողական գծագրերը:

*Հաշվետվության ներկայացման պահանջներ*

- Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին Ծառայությունների վերաբերյալ *<u>ընթացիկ և ավարտական հաշվետվություններ</u>*, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր:

- *<u>Ընթացիկ հաշվետվությունները</u>* ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտի ժամանակահատվածին համապատասխան, ընդգրկելով իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխ.հսկողության ծառայությունների վերաբերյալ, տեղեկանք (Ձև 2), լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ, և այլ անհրաժեշտ փաստաթղթեր):

  *<u>Ավարտական հաշվետվությունը</u>* պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական գծագրեր, ավարտական կատարողական ակտ, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով)

- *<u>Ընթացիկ հաշվետվությունները</u>* ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ

| | |
|---|---|
| | մեկտեղ:<br>• *Ավարտական հաշվետվությունը* ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում: |
| *Նորմատիվային պահանջներ* | Տեխնիկական հսկողության ծառայությունները իրականացնել համաձայն՝<br>• ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի<br>• Քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» հրամանի<br>• ՀՀ կառավարության թիվ 526-Ն 4 մայիսի 2017 թ.. որոշման |

| Ծառայությունների մատուցման ժամկետը | |
|---|---|
| *սկիզբը* | *ավարտը* |
| Համապատասխան շինարարական աշխատանքների կատարման սկիզբը | Համապատասխան շինարարական աշխատանքների կատարման ավարտը |

## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

*Ա/ճ Մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման*
*կմ86+700 հատվածում կամուրջի վերանորոգման*
*(Ընդհանուր)*

| «« | Աշխատանքների անվանումը | Չափի միավ. | Քանակը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Մետաղական բազրիքների ապատեղակայում, բարձում, տեղափոխում պահուստ 3,0կմ (12գծ.մ) | տոն | 0.2 |
| 2 | Т1-1,0 հավաքովի մայթի բլոկների ապատեղակայում 8հատ , բարձում տեղափոխում լցակույտ 3,0կմ | մ³ | 14 |
| 3 | Երթևեկելի մասի ա/բ ծածկի քանդում h=10սմ, բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 3,0կմ | մ² | 150 |
| 4 | Պաշտպանիչ, ջրամեկուսիչ և հարթեցնող շերտերի քանդում, բարձում տեղափոխում լցակույտ 3,0կմ h=8սմ | մ² | 106 |
| 5 | ПР-9 կողավոր սալերի ապատեղակայում, բարձում, տեղափոխում լցակույտ 3,0կմ V=2,0մ³ , G=5,0տոն | հատ | 2 |
| 6 | L=8,86մ հավաքովի ե/բ տավրաձև դիաֆրագմաներով հեծանների ապատեղակայում, բարձում, տեղափոխում լցակույտ 3,0կմ V=3,5մ³ , G=8,75տոն | հատ | 7 |
| 7 | Թեիչքային կառուցվածքից դուրս ամեն կողմից 3-ական գծ.մ հողային պաստառի (IV կարգ) քանդում էքսկավատորով (0,65մ³), տեղում կուտակումով | մ³ | 95 |
| 8 | Պարզունակների վրայի խամքարե բետոնի քանդում հարվածահատ մուրճով, բարձում, տեղափոխում լցակույտ 3,0կմ | մ³ | 2.0 |
| 9 | Գոյություն ունեցող պարզունակների մեջ d=40մմ և L=20սմ խորությամբ անցքերի փորում խարիսիների տեղադրման համար | տեղ | 128 |
| 10 | Անցքերի մեջ ցեմենտե շաղախի լցում | մ³ | 0.032 |
| 11 | Անցքերի մեջ խարսխաձողերի տեղադրում (51,2 գծ.մ) Ø16մմ AIII L=40սմ | կգ | 80.8 |
| 12 | Գոյություն ունեցող պարզունակի վրա նոր պարզունակի իրականացում ե/բետոնով (h=0,38-0,5մ) B25 F200 | մ³ | 7.7 |

| | | | |
|---|---|---|---|
| | Ամրան Ø8AI | կգ | 158.26 |
| | Ամրան Ø12AIII | կգ | 266 |
| | ցից Ø22AIII 24հատ | կգ | 39.4 |
| | պարույր Ø4AI 24հատ | կգ | 5.9 |
| | ռետինե խողովակ dներք.=24մմ L=45սմ; 24 հատ | կգ | 9.84 |
| | Հակասեյսմիկ հենակների արտաթողեր (шпилька) ամրանØ12AIII | կգ | 19.72 |
| 13 | Հակասեյսմիկ հենակի ե/բետոն B25 F200 (ամրանների ծավալները տրված են պարզունակի հետ) | մ$^3$ | 0.25 |
| 14 | Եռաշերտ տոլ հեծանների հենման մասում | մ$^2$ | 8.4 |
| 15 | Հավաքովի ե/բ ПР-9 կողավոր սալերի տեղակայում պնևմոանվային կռունկով V=2,0մ$^3$ , G=5,0 տոն Ներդիր էլեմենտներ երկու եզրային հեծաններում Ն. Է.-1-18 հատ | հատ | 12 |
| | Թերթավոր պողպատ 18 հատ 150x200x10; G=2,35կգ -42,4կգ | | |
| | ամրան AIIIØ12մմ-18,22կգ | | |
| | Ն. Է.-2-18հատ | | |
| | Թերթավոր պողպատ 18 հատ 150x100x10; G=1,18կգ-21,2կգ | | |
| | ամրան AIIIØ12մմ-12,78կգ | | |
| 16 | Սալերի ցցերի մեջ անցքերի լցում B30 դասի բետոնով | մ$^3$ | 0.09 |
| 17 | Երիթային կցանման իրականացում հեծանների միջև B 35 | մ$^3$ | 3.55 |
| | պարույր AIØ3մմ | կգ | 66.9 |
| 18 | Թռիչքային կառուցվածքի բետոնե հավասարեցնող շերտ h=3սմ B20 | մ$^2$ | 108 |
| 19 | Ջրամեկուսացում „техноэласт Б" ով h=1սմ, | մ$^2$ | 108 |
| 20 | Ցինկապատ թիթեղից ջրթափ հովար d=0,8մմ | գծ.մ | 18 |
| 21 | Ամրանավորված բետոնե պաշտպանիչ շերտ B25 երթևեկելի մասում h=4սմ | մ$^2$ | 84 |
| 22 | Ցանց ամրանային 100x100մմ;Ø6 AI | մ$^2$ | 84 |
| 23 | Բետոնե պաշտպանիչ շերտ առանց ամրանավորման B25 մայթերի հատվածում h=4սմ | մ$^2$ | 13.5 |
| 24 | Հավաքովի ե/բետոնե անվահրիչի տեղադրում (299x90x60սմ) B25 F200 V=0,63մ3 P =1,57 տոն (ավազացեմենտե շաղախ անվահրիչների տակ h=1սմ; 11մ$^2$) | հատ | 6 |
| 25 | Մանրահատիկ ա/բ h=4սմ | մ$^2$ | 84 |
| 26 | Մանրահատիկ ա/բ h=3սմ | մ$^2$ | 84 |
| 27 | Մայթերի ավազահատիկ ա/բ h=4սմ | մ$^2$ | 13.5 |
| 28 | Մետաղական բազրիքների տեղակայում թռիչքային կառուցվածքի վրա L=3,0մ սեկցիաներով 6հատ-18գծ.մ | կգ | 538.74 |
| 29 | Հենարանների պարզունակների և հեծանների գրունտով ծածկվող մակերևույթների երկշերտ ջրամեկուսացում տաք բիտումով | մ$^2$ | 35 |
| 30 | Հեծանների գոյություն ունեցող պարզունակի միաձուլված մասերի քայքայված բետոնի վերականգնում B25դասի բետոնով | մ$^3$ | 0.1 |
| 31 | Հետադարձ լիցք բուլդոզերով թռիչքային կառուցվածքից դուրս | մ$^3$ | 69 |
| 32 | Ավազե հարթեցնող շերտ նույն տեղում h=10սմ | մ$^2$ | 60 |
| 33 | Չափազատված խիճ h=16սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ$^2$ | մ$^2$ | 60 |
| 34 | Տաք, ծակոտկեն խոշորահատիկ ա/բետոն h=6սմ | մ$^2$ | 60 |

| | | | |
|---|---|---|---|
| 35 | Տաք մանրահատիկ ա/բետոն „Մ"տիպ h=4սմ | մ² | 110 |
| 36 | Հավաքովի ե/բետոնե անվահրիչի անցումային բլոկի տեղադրում (150x75x50սմ) B25 F200 V=0,4մ3 P =1,17տոն (ավազացեմենտե շաղախ h=1սմ; 3,0մ²) | հատ | 4 |
| 37 | Անվահրիչների և անվահրիչների անցումային բլոկների ներկում | մ² | 39 |
| 38 | Փոսորակի փորում ուղղորդող կողային պատերի հիմնատակում III6վ գրունտներում էքսկավատորով (0,65մ³), կուտակումով | մ³ | 170 |
| 39 | Նույնը ձեռքով | մ³ | 16 |
| 40 | Ավազակոպճե շերտ կողային պատերի հիմնատակում h=20սմ | մ³ | 4.5 |
| 41 | Կողային ուղղորդ պատերի հիմքի միաձույլ բետոն B20 | մ³ | 27.92 |
| 42 | Կողային ուղղորդ պատերի իրանի միաձույլ բետոն B20 | մ³ | 43.92 |
| 43 | Կողային պատերի գրունտով ծածկվող մակերևույթի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով | մ² | 106.5 |
| 44 | Հետադարձ լիցք բուլդոզերով | մ³ | 110 |
| 45 | Նոր մետաղական արգելափակոցների տեղադրում աջից(4+5մ) | գծ.մ | 9 |
| 46 | Գոյություն ունեցող արգելափակոցների վերատեղադրում , ներկում ձախից (4+4մ) | գծ.մ | 8 |
| 47 | Մետաղական արգելափակոցների ներկում | տոն | 0.14 |
| 48 | էլեկտրական մալուխների ապատեղակայում, նորից տեղադրում | գծ.մ | 40 |
| 49 | d=50մմ d=4,6մմ պոլիէթիլենային խողովակների տեղադրում | գծ.մ | 40 |
| 50 | Կամրջի չորս անկյուններում լիցքի իրականացում ձեռքով տեղում կուտակված գրունտով, խտացումով | մ² | 82 |

*Ա/ճ Մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ86+700 հատվածում կամուրջի վերանորոգման (2017 թ.)*

| ՀՀ | Աշխատանքների անվանումը | Չափի միավ. | Քանակը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Հավաքովի ե/բ ՊՐ-9 կողավոր սալերի արժեքը | հատ | 7 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
ՀՎՀ 900011002632
ՀԿՀՀ 02568518

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Արցախճան>> ինստիտուտ ՓԲԸ
ԼՂՀ, ք.Ստեփանակերտ, Հեքիմյան 8ա,
բն.23,Արցախբանկ ՓԲԸ, Երևանի
կենտրոնական մ/ճ
ՀՎՀ 223076011525,
ՀԿՀՀ [illegible]

Կ.Տ.

Հավելված N 2
«10» 10 2017թ. կնքված
ՏԿՆ-ԲՄԾՁԲ-2017/3ՏՀ-2 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 3 | 71351540/1 | Ա/ճ Մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ86+700 հատվածում կամուրջի վերանորոգման տեխնիկական հսկողություն | - | - | - | - | - | - | - | - | - | 7 000 | 7 000 | 7 000 | 7 000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն<br>ք. Երևան, Նալբանդյան 28<br>Կենտրոնական Գանձապետարան<br>Հ/Հ 900011002632<br>ՀՎՀՀ 02565518 | <<Արցախճան>> ինստիտուտ ՓԲԸ<br>ԼՂՀ, ք.Ստեփանակերտ, Հեքիմյան 8ա,<br>բն.23,Արցախբանկ ՓԲԸ, Երևանի<br>կենտրոնական մ/ճ<br>Հ/Հ 223076011525,<br>ՀՎՀՀ 90009361 |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3*
*«  »  20 թ. կնքված*
*ՏԿՆ-ԲՄԾՁԲ-2017/3ՏՀ-2 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| _____ | _____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  » «  » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«  »  20  թ. կնքված*
*ՏԿՆ-ԲՄԾՁԲ-2017/3ՏՀ-2  ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը  Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20  թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը  պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

| Հանձնեց | Ընդունեց<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |

Հավելված 4
<<10>> << 10>> 2017թ. կնքված
N ՏԿՆ-ԲՄԾՁԲ-2017/3ՏՀ-2 ծածկագրով գնման պայմանագրի

# Ճանապարհաշինական աշխատանքների ծառայության երաշխիքային ժամկետները

Ճանապարհային աշխատանքների ծառայության երաշխիքային ժամկետը հաշվարկվում է ավտոճանապարհը պատվիրատուին հանձնման պահից սկսած:
Ճանապարհային պատվածքի, կամուրջների, ազդանշանային նյութերի, նշագծման և այլնի ծառայության երաշխիքային ժամկետներն հետևյալն են՝

- Ճանապարհային հագուստի հիմքի համար - 15տարի
- Պատվածքի ստորին շերտի համար - 10տարի
- Պատվածքի վերին շերտի համար
- կապիտալ և թեթևացված կատարելագործված տիպի համար - 7տարի:

Թերությունների ի հայտ գալու դեպքում, երաշխիքային ժամկետը, տարրի կամ կառույցի որոշ մասի համար, նշանակվում է նորից, թերությունների վերացման պահից սկսած:
Թերությունների վերացման համար ծախսված ժամանակը հաշվի չի առնվում:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն<br>ք. Երևան, Նալբանդյան 28<br>Կենտրոնական Գանձապետարան<br>Հ/Հ 900011002632<br>ՀՎՀՀ 02565518 | <<Արցախճան>> ինստիտուտ ՓԲԸ<br>ԼՂՀ, ք.Ստեփանակերտ, Հեքիմյան 8ա, բն.23,Արցախբանկ ՓԲԸ, Երևանի կենտրոնական մ/ճ<br>Հ/Հ 223076011525,<br>ՀՎՀՀ 90009361 |
| (ստորագրություն) | |
| Կ.Տ. | |

# ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «10» 10 2017 թ.

*«Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ* ի դեմս Ընկերության գործադիր տնօրեն *Ռոբերտ Սողոյանի, անձնագիր*
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը

*AK0653647, տրված 001-ի կողմից,18.11.2010 թ.,* որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝
, անձնագրային տվյալները

(այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. Համաձայնության առարկան

1.1Ընկերությունը մասնակցում է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ *ՏԿՆ-ԲՄԾՁԲ-2017/3Տ* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 3. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

*Ընկերության անվանումը՝ «Արցախճան» ինստիտուտ ՓԲԸ*
*Հասցեն՝ ԼՂՀ, ք.Ստեփանակերտ, հեթիմյան 8ա շենք ,բն.23, հեռ. (010) 62-87-85*
*Սպասարկող բանկի անվանումը, «Արցախբանկ» ՓԲԸ Երևանի կենտրոնական մասնաճյուղ*
*ՀՎՀ 223076011525*
*ՀԿՀՀ 90009361*

*Գործադիր տնօրեն Ռոբերտ Սողոյան* _____
(ստորագրություն)

*Գլխավոր հաշվապահ Բաղդասարյան* _____
(ստորագրություն)

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N
*(մասնակցության հայտի ապահովում)*

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" _____ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ *«Արցախման» ինստիտուտ ՓԲԸ*

4. Վճարողի բանկը՝ *«Արցախբանկ» ՓԲԸ-ի Երևանի կենտրոնական մասնաճյուղ*

5. Վճարողի հաշվի համարը՝ *223076011525*

6. Վճարողի ՀՎՀՀ՝ *90009361*

7. Վճարողի ՀՁՀ՝

8. Շահառու՝ *ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն*

9. Շահառուի ՀՎՀՀ՝ *02565518*

10. Շահառուի բանկը՝ *Կենտրոնական գանձապետարան*

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ *900005000758*

12. Գումարը թվերով և բառերով՝ *4 800 (չորս հազար ութ հարյուր)*

13. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ *պայմանագրի կատարման ապահովում*

15.Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ *ՏԿՆ-ԲՄԾՁԲ-2017/3Հ*

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

| | |
|---|---|
| 19.ա. Շահառուի ստորագրությունները՝<br>/_____/<br>/_____/<br>19.բ. Կ.Տ. | 18.ա.<br>Վճարողի ստորագրությունները՝<br>/_____/<br>/_____/<br>18.բ. Կ.Տ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից<br>20.ա. /_____/<br>/ստորագրություն/<br>20.բ. Կ.Տ.<br>"___" ___ 20___ թ. | Կատարված է վճարողի բանկի կողմից<br>21.ա.<br>/_____/<br>/ստորագրություն/<br>21.բ. Կ.Տ.<br>22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |